



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

31.10.2024թ.

**ՈՐՈՇՈՒՄ 1267-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Գ. ԳԱԼՍՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 62/43 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ  
ԿԱՌՈՒՅԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 19.9ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒ 20.0ՔՄ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 0.002ՀԱ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԱԼՅՈՆԱ  
ՎԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 կետով, 35-րդ կետի դ) ենթակետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ա որոշման դրույթները, և քննության առնելով Գորիս քաղաքի բնակիչ Այոնա Վանյանի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի դիմումը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

- Գորիս քաղաքի Գ. Գալստյան փողոցի թիվ 62/43 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում՝ Այոնա Վանյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն գրանցված (վկ. N21102024-09-0014) 19.9քմ արտաքին /18.7քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը (19.9x1209=24100) քանչորս հազար մեկ հարյուր ՀՀ դրամով, 20.0քմ արտաքին /19.9քմ ներքին/ մակերեսով օժանդակ շինությունը (20.0x2418=48400) քառասունութ հազար չորս հարյուր ՀՀ դրամով, և 0.002հա մակերեսով սպասարկման հողատարածքը (20.0x1221=24500) քանչորս հազար հինգ հարյուր ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Այոնա Վանյանին:
- Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

